ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 03.10.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/33

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննելով «Սյունիք» ՍՊԸ-ի կողմից 15.09.2017թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2017/33 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Սյունիք» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Սյունիք» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ուղղված 15.09.2017թ. բողոքով հայտնել է, որ ՀՀ Արմավիրի մարզպետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ՀՀ Արմավիրի մարզի օբյեկտների վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 06.06.2017թ. հայտարարվել է «ԱՄ ՀԲՄԱՇՁԲ-17/6» ծածկագրով ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ): Ընկերությունը սահմանված կարգով հայտ է ներկայացրել գնման ընթացակարգի 1-ին, 2-րդ, 4-րդ, 5-րդ և 7-րդ չափաբաժինների մասով: Հայտերի բացումը տեղի է ունեցել 21.06.2017թ.: Գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի գնահատման արդյունքում Ընկերությունը 2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով զբաղեցրել է 2-րդ տեղը, այնինչ

նշված չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի «Միլաքս Գրուպ» ՓԲԸ-ի գնային առաջարկում առկա է եղել անհամապատասխանություն՝ մասնավորապես 2-րդ չափաբաժնի կատարման համար մասնակիցը ներկայացրել է 28 847 000 ՀՀ դրամի գնային առաջարկ, որի ԱԱՀ-ն օրենքով սահմանված կարգով կազմում է 4 812 400 ՀՀ դրամ, սակայն մասնակիցը որպես ԱԱՀ-ի գումար ներկայացրել է 4 812 000 ՀՀ դրամ, այսինքն՝ սահմանված չափից 400 ՀՀ դրամ պակաս, իսկ 5-րդ չափաբաժնի մասով մասնակիցը ներկայացրել է 16 108 000 ՀՀ դրամ գնային առաջարկ, որի ԱԱՀ-ն օրենքով սահմանված կարգով կազմում է 2 684 600 ՀՀ դրամ, սակայն մասնակիցը որպես ԱԱՀ-ի գումար ներկայացրել է 2 685 000 ՀՀ դրամ:

Նշված խնդրի մասով «Սյունիք» ՍՊԸ-ն բողոք էր ներկայացրել ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին: Խորհուրդը 28.07.2017թ. թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/20 որոշմամբ բավարարել է բողոքը, որի համաձայն՝ նշված չափաբաժինների մասով «Միլաքս Գրուպ» ՓԲԸ-ի ներկայացրած հայտը մերժվել է:

ՀՀ Արմավիրի մարզպետարանի կողմից կազմակերպված «ԱՄ ՀԲՄԱՇՁԲ-17/6» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 02.08.2017թ. կազմվել է արձանագրություն (առանց հերթական համարի), որն ուղարկվել է գնումների բողոքարկման խորհրդի անդամ պարոն Մ. Անանյանին, համաձայն որի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Խորհրդի կողմից կայացված որոշումը, մերժում է 2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով «Միլաքս Գրուպ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում «Սյունիք» ՍՊԸ-ին: Սակայն Արմավիրի մարզպետարանի կողմից «Սյունիք» ՍՊԸ-ին որևէ գրություն կամ այլ փաստաթուղթ չի ուղարկվել: Այնինչ 17.08.2017թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու մասին որոշումը (անգործության ժամկետ), որից հայտնի է դառնում, որ 15.08.2017թ. գնահատող հանձնաժողովի որոշմամբ, որի համարը նույնպես նշված չէ, մերժվել է «Սյունիք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը և նշված չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել 3-րդ տեղ զբաղեցրած մասնակիցը:

Ընկերությունը նշել նաև, որ պայմանագիր կնքելու որոշումը հրապարակելու օրը հրապարակվել է նաև կնքված պայմանագրի մասին հայտարարությունը, որից հայտնի է

դառձել, որ 17.08.2017թ. հաղթող մասնակիցների հետ կնքվել են համապատասխան պայմանագրեր:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 10-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների բողոքարկման խորհրդում չի բողոքարկվում պայմանագիր կնքելու մասին որոշումը: Մինչև անգործության ժամկետը լրանալը կամ առանց պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակման կնքված պայմանագիրն առոչինչ է:

Նշված խնդրի հետ կապված ևս «Սյունիք» ՍՊԸ-ն բողոք է ներկայացրել Խորհրդին, որի վերաբերյալ Խորհուրդը թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/28 որոշմամբ չեղյալ է համարել «ԱՄ ՀԲՄԱԾՁԲ-17/6» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կայացված պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Սակայն այս անգամ ևս Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժել է «Սյունիք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ պատճառաբանելով, որ հայտի «Վճարման պահանջագրում մասնակցի կողմից էլեկտրոնային թվային ստորագրության մի մասը (որը համակարգը գեներացնում է ավտոմատ եղանակով և կարող է փաստաթղթի վրա ցանկացած տեղ նշվել) դրված է շահառուի ստորագրության դաշտում, մինչդեռ այդ դաշտերը նախատեսված են թղթային եղանակով կազմակերպվող գնման ընթացակարգերի համար, որտեղ չի պահանջվում էլեկտրոնային թվային ստորագրություն և մասնակիցները հայտերը ներկայացնում են թղթային տարբերակով՝ կնքված և ստորագրված (ոչ էլեկտրոնային ստորագրությամբ):

Ընկերությունը բողոքով հայտնել է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հրավերով սահմանված հայտի ապահովումը (տուժանքի մասին համաձայնագիրը և վճարման պահանջագիրը) համարվում է բանկային փաստաթուղթ և դրա լրացման կարգը չի սահմանվում «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ուստի «Սյունիք» ՍՊԸ-ն դիմել է ՀՀ կենտրոնական բանկին, խնդրելով պարզաբանում տալ նշված փաստաթղթի լրացման պայմանների վերաբերյալ, որի պատասխանը ստանալուց հետո անմիջապես կտրամադրվի Խորհրդին:

Ընկերությունը որպես բողոքի իրավական հիմք վկայակոչել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ կետը և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետը:

«Սյունիք» ՍՊԸ-ն բողոքով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է չեղյալ ճանաչել Արմավիրի մարզպետարանի կողմից կազմակերպված «ԱՄ ՀԲՄԱՇՁԲ-17/6» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 01.09.2017թ. կայացված որոշումը և ընթացակարգի արդյունքներով պայմանագիր կնքելու մասին որոշումը:

«Սյունիք» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 19.09.2017թ. ժամը 12:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

Խորհրդի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ Ընկերության կողմից ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրված որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

2. <u>ՀՀ Արմավիրի մարզպետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը, ներկայացված բողոքի վերաբերյալ կարծիք ստանալու նպատակով, 15.09.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/16776-17 գրությամբ դիմել է ՀՀ Արմավիրի մարզպետարանին:

Խորհրդի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ Պատվիրատուի կողմից գրավոր կարծիք չի ներկայացվել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 19.09.2017թ. ժամը 12:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժելով «Սյունիք» ՍՊԸ-ի հայտը, առաջնորդվել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված դիրքորոշմամբ և գործել է իրավաչափ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, քանի որ Ընկերության հայտի ապահովման վճարման պահանջագիրը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

3. ԳԲԽ-ԱՄ-2017/33 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2017/33 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ Արմավիրի մարզպետարանի կողմից ՀՀ Արմավիրի մարզի օբյեկտների վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԱՄ ՀԲՄԱՇՁԲ-17/6» ծածկագրով հրատապ բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև «Սյունիք» ՍՊԸ-ն:

2. «Սյունիք» ՍՊԸ-ի կողմից հայտի թիվ 9 հավելվածով ներկայացված մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագրի մեջ Ընկերության տնօրենի էլեկտրոնային ստորագրությունը դրվել է «19.ա. Շահառուի ստորագրությունները» դաշտում:

3. ՀՀ Արմավիրի մարզպետարանը 02.08.2017թ. թիվ 02/04/3202-17 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը, խնդրելով հայտնել, թե արդյոք «Սյունիք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի վճարման պահանջագիրը վավեր է, թե ոչ, եթե 19-րդ դաշտը էլեկտրոնային թվային ստորագրությամբ ստորագրվել է վճարողի կողմից:

4. Ի պատասխան Պատվիրատուի վերոհիշյալ գրությանը՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 11.08.2017թ. թիվ 03/27-1/14672-17 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ֆինանսների նախարարի կողմից հաստատված հրավերների օրինակելի ձևերի՝ որպես հայտի ապահովում ներկայացվելիք վճարման պահանջագրի լրացման կարգով սահմանված է, որ 19-րդ կետով ներկայացված դաշտը պարտադիր ստորագրվում է շահառուի (պատվիրատուի) կողմից՝ վճարման պահանջագիրը բանկ ներկայացնելու նպատակով:

Վերոգրյալով պայմանավորված և նկատի ունենալով, որ վճարման պահանջագրում 19-րդ կետով ներկայացված դաշտը ստորագրված է մասնակցի կողմից և արդեն անհնար է դառնում այդ փաստաթուղթը բանկ ներկայացնելու նպատակով շահառուի

(պատվիրատուի) ստորագրությամբ հաստատելը, ուստի ՀՀ ֆինանսների նախարարությունը գտնում է, որ նշված մասնակցի հայտը ենթակա է մերժման:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության պարզաբանումը, 01.09.2017թ. արձանագրության 1.1 կետով կայացրած որոշմամբ «Սյունիք» ՍՊԸ-ի հայտը մերժել է:

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով «Սյունիք» ՍՊԸ-ի 15.09.2017թ. բողոքը, «ԱՄ ՀԲՄԱՇՁԲ-17/6» ծածկագրով ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը, ՀՀ ֆինանսների նախարարության 11.08.2017թ. թիվ 03/27-1/14672-17 գրությունը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը ***մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:*** Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Նույն կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ***բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան,*** ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը

դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

ՀՀ ֆինանսների նախարարի 24.05.2017թ. «Բաց մրցույթով էլեկտրոնային եղանակով կազմակերպվող գնումների բազային միավորի հնգապատիկը գերազանցող գնման հայտարարությունների և հրավերների օրինակելի ձևերը հաստատելու մասին» N 244-Ա հրամանի հավելված 2-ով հաստատված աշխատանքների գնման մրցույթի հրավերի մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի 18.ա. և 19.ա. կետերի համաձայն՝ վճարման պահանջագրի՝

- «18.ա. վճարողի ստորագրություն» պարտադիր դաշտը ***ստորագրվում է վճարողի կողմից.***
- «19.ա. շահառուի ստորագրությունը» պարտադիր դաշտը ***պարտադիր ստորագրվում է շահառուի կողմից՝ բանկ ներկայացնելիս:***

Այսպես ՀՀ Արմավիրի մարզպետարանի կողմից ՀՀ Արմավիրի մարզպետարանի կարիքների համար կազմակերպված «ԱՄ ՀԲՄԱՇՁԲ-17/6» ծածկագրով բաց մրցույթին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Սյունիք» ՍՊԸ-ն հայտի թիվ 9 հավելվածով ներկայացրել է հայտի ապահովում, որի անբաժանելի մասը կազմող վճարման պահանջագրի մեջ Ընկերության տնօրենի ստորագրությունը դրվել է «19.ա. Շահառուի ստորագրությունները» դաշտում:

Ընթացակարգի հրավերի համաձայն՝ հայտերն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային ձևով:

Նույն հրավերի մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի համաձայն՝ վճարման պահանջագրի ***«18.ա. Վճարողի ստորագրությունը» դաշտը ստորագրվում է (ոչ պարտադիր) վճարողի կողմից, իսկ «19.ա.Շահառուի ստորագրությունը» դաշտը <u>պարտադիր</u> ստորագրվում է շահառուի կողմից՝ բանկ ներկայացնելիս:*** Մինչդեռ «Սյունիք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովման վճարման պահանջագրում շահառուի՝ տվյալ դեպքում պատվիրատու ՀՀ Արմավիրի մարզպետարանի կողմից ստորագրման ենթակա դաշտը արդեն իսկ ստորագրված է վճարողի՝ «Սյունիք» ՍՊԸ-ի

կողմից, հետևաբար նման պայմաններում շահառուն զրկվում է վճարման պահանջագիրը սահմանված դաշտում ստորագրելու հնարավորությունից, ուստի և անհնար է դառնում վճարման պահանջագիրը սահմանված կարգով բանկ ներկայացնելը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը սահմանում է, որ հանձնաժողովը ***մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:*** Ընդ որում նույն կարգի 41-րդ կետի համաձայն, եթե հայտում բացակայում է գնային առաջարկը ***կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա մասնակցին չի տրվում հայտում առկա նշված անհամապատասխանությունները շտկելու հնարավորություն:***

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վճարման պահանջագրի համապատասխան դաշտերի լրացման կարգը հստակ սահմանված է ՀՀ ֆինանսների նախարարի 24.05.2017թ. N 244-Ա հրամանով, որը համապատասխանաբար իր ամրագրումն է ստացել նաև «ԱՄ ՀԲՄԱՇՁԲ-17/6» ծածկագրով բաց մրցույթի հրավերի «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի» մեջ, ուստի Խորհուրդը հիմք ընդունելով նաև ՀՀ ֆինանսների նախարարության 11.08.2017թ. թիվ 03/27-1/14672-17 գրությամբ արտահայտած դիրքորոշումը, գտնում է, որ «Սյունիք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովման վճարման պահանջագիրը չի համապատասխանում հրավերի պահանջներին: Ուստի Խորհուրդը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, մերժելով «Սյունիք» ՍՊԸ-ի հայտը, առաջնորդվել է Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջներով և գործել է իրավաչափ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Սյունիք» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 15.09.2017թ. ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Սյունիք» ՍՊԸ-ի կողմից 15.09.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ